«ԷՓՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերության ղեկավարներին գրանցելու մասին

2022-07-26

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

Որոշում թիվ 1/384 Ա

26.07.2022

«ԷՓՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերության ղեկավարներին գրանցելու մասին

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի «է1» կետը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 15.01.2008թ. թիվ 15-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ի 72-րդ կետը, հաշվի առնելով ՀՀ կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (15.07.2022թ. արձանագրություն թիվ 29), «ԷՓՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերության ստեղծումը նախաձեռնող անձանց՝ Դավիթ Ամարյանի և Վարդան Ամարյանի կողմից լիազորված անձ՝ Վաչիկ Գևորգյանի կողմից 23.06.2022թ. և 07.07.2022թ.Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված միջնորդագրերը և կից փաստաթղթերը՝

Ո ր ո շ ու մ ե մ.

1. Գրանցել Վաչիկ Գևորգյանին «ԷՓՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի պաշտոնում:
2. Գրանցել Արմինե Սարգսյանին «ԷՓՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր հաշվապահի պաշտոնում:
3. Գրանցել Վլադիմիր Թալալյանին «ԷՓՐԻՔՈՌ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական

ընկերության ներքին աուդիտի ղեկավարի պաշտոնում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ